ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 17 » մայիսի 2016 թվականի N:139-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՅԿԱՁՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Հայկաձոր համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 5-ի N 48 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի մարտի 11-ի նիստի թիվ 4 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի մարտի 12-ի նիստի թիվ 3 արձանագրությունը, Արմեն Ստամբոլցյանի 2016 թվականի մարտի 31-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հայկաձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Գագիկ Պետրոսյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկաձոր համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Զոհրակ Սարգսյանի լիազորությունները,

3) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Արմինե Հովհակյանի, Ռուդիկ Գևորգյանի լիազորությունները,

4) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Արթուր Սարգսյանի, Համլետ Սարգսյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Արմեն Ստամբոլցյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված և 2013 հոկտեմբերի 30-ին Խորհրդի կազմում հաստատված Գևոր Սարգսյանի լիազորությունների ժամկետ սահմանել մինչև 2016 թվականի հոկտեմբերի 30-ը:

4. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արմեն Դավթյանին, Գագիկ Պետրոսյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկաձոր համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Զոհրակ Սարգսյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Արմինե Հովհաակյանին, Ռուդիկ Գևորգյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Համլետ Սարգսյանին, Սուրիկ Նիկոյանին:

5. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

6. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N150 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի մայիսի «17» N/39-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՅԿԱԶՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Սարգսյան Գևոր	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Պետրոսյան Գագիկ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Դավթյան Արմեն	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Սարգսյան Զոհրակ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Գևորգյան Ռուդիկ	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Հովհաննիսյան Արմինե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Սարգսյան Համլետ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Նիկոյան Սուրիկ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան

Իսկականի հետ ճիշտ է